Գյուղատնտես

ՀՈԿՏԵՄԲԵՐ 7 - 15 2014 Թ. ԹԻՎ 26 (2048)

ՏԱՄՆՕՐՅԱ ԹԵՐԹ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1951 Թ. ԳԻՆԸ՝ 120 ԴՐԱՄ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՀՀ կառավարությունը լրացում է կատարել իր նախկին որոշումներից մեկում, որով բելառուսական ձեռնարկություններից պետական աջակցությամբ Հայաստան են ներկրվում տրակտորներ և հարակից գյուղատնտեսական սարքավորումներ: 2014թ. ընթացքում Հայաստանի **ՓՄՁ ԶԱԿ** են դիմել բազմաթիվ համայնքների ղեկավարներ և ֆերմերներ՝ ցանկություն հայտնելով ձեռք բերել նաև «Ռոստսելմաշ» ընկերության կոմբայններ: Այս ձեռնարկության արտադրանքը հայտնի է մեր երկրում, «Ռոստսելմաշն» ունի պաշտոնական ներկայացուցիչ, ինչը հեշտացնում է երաշխիքային սպասարկումը: Հաշվի առնելով այս իրողությունը՝ բելառուսական «Մինսկի տրակտորի գործարան», «Բոբրույսկագրոմաշ» և «Լիդսելմաշ» ԲԲԸ-ների շարքում ավելացվել է կոմբայն արտադրող ռուսական «Ռոստսելմաշ» ՍՊԸ-ի անունը:

Մեկ այլ որոշմամբ, գործադիրը հաստատել է նաև Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքում պետական միջոցներով վերակառուցված շենքի բնակարանների բաշխման և հատկացման կարգը: Նույն մարզի Ճարճակիս համայնքում գտնվող մանկապարտեզի շենքում նախատեսվում է իրականացնել նախադպրոցական, տարրական, հիմնական և միջնակարգ ուսումնական ծրագրեր: Գեղարքունիքի մարզի Աստղաձորի դպրոցի ջեռուցման, Սյունիքի մարզի Կապանի 2-րդ ավագ դպրոցի տարածքի բարեկարգման, ինչպես նաև Կոտայքի մարզի Նոր Գեղիի բանավանի, Գեղարքունիքի մարզի Գավառի 5-րդ և Շիրակի մարզի Մեծ Մանթաշի դպրոցների համար, գույքի ձեռքբերման նպատակով, կառավարությունն ավելի քան 73.5 մլն դրամ է հատկացրել ՀՀ քաղաքաշինության նախարարությանը:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴԼԱՅՆԵԼ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության բաժնի պետ Սանտի Վեգեին, որին ուղեկցում էր Շվեյցարիայի Դաշնության դեսպանության (նստավայրը՝ Թբիլիսի) Հարավկովկասյան տարածաշրջանի տնօրեն, խորհրդական Ռուդոլֆ Շոչը:

Հանդիպման սկզբում նախարարը հյուրերին հակիրճ ներկայացրել է Հայաստանի գյուղատնտեսության բնագավառում վերջին տարիներին գրանցված դրական ցուցանիշները: Նախարարը նշել է, որ ներկայումս քայլեր են ձեռնարկվում օգտագործվող հողատարածքների ավելացման, մշակաբույսերի բերքատվության բարձրացման, մթերատվության և գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծման ուղղությամբ:

Անդրադառնալով Սյունիքի մարզում Գործակալության կողմից կենդանիների բրոցելյոզ հիվանդության դեմ ծրագրի հաջող իրականացմանը՝ նախարար Սերգո Կարապետյանն առաջարկել է շվեյցարական կողմին ուսումնասիրել ծրագիրը Հայաստանի բոլոր մարզերում իրականացնելու հնարավորությունը: Նախարարն առաջարկել է նաև աջակցություն ցուցաբերել Հայաստանում կենդանիների հաշվառման և համարակալման, ինչպես նաև օրգանական գյուղատնտեսության զարգացմանը:

Գործակալության բաժնի պետ Սանտի Վեգեն նշել է, որ տպավորված է նախարարի ներկայացրած ցուցանիշներով և ընդգծել է, որ Գործակալությունը մտադիր է շարունակել համագործակցությունը Հայաստանի հետ և ընդլայնել հանրապետությունում իրականացվող ծրագրերի շրջանակը: Ռուդոլֆ Շոչն իր նկատառումներն է ներկայացրել Հայաստանում անասնաբուժական ծառայությունների մատուցման կարգի վերաբերյալ՝ նշելով, որ այս բնագավառում դեռևս առկա են չկարգավորված խնդիրներ: Սերգո Կարապետյանը նշել է, որ անասնաբուժական արդյունավետ ծառայություններ իրականացնելու նպատակով, դրական դեր կարող է ունենալ անասնաբուժական կենտրոնների ստեղծումը, անասնաբույժների մասնագիտական հմտությունների կատարելագործումը և դրան առնչվող առաջավոր երկրների փորձի ներդրումը:

Համագործակցությանն ավելի գործնական բնույթ հաղորդելու համար, նախարարը նպատակահարմար է համարել ստորագրել փոխըմբռնման հուշագիր՝ նախարարության և Գործակալության միջև:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ԵՐԿԿՈՂՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՏԻՎԱՑՈՒՄ

ՌԴ գյուղատնտեսության նախարար Նիկոլայ Ֆյոդորովի հրավերով, եռօրյա այցով Ռուսաստանի Դաշնությունում գտնվող ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը Մոսկվայում հանդիպում է ունեցել ռուս գործընկերոջ հետ: Հանդիպմանը հայկական կողմից մասնակցում էին ՌԴ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Օ. Եսայանը, ՌԴ-ում ՀՀ առևտրական ներկայացուցիչ Կ. Ասոյանը և այլոք:

Ռուսական կողմից հանդիպմանը ներկա են եղել ՌԴ անասնաբուժական և ֆիտոսանիտարական հսկողության դաշնային ծառայության ղեկավար Ս. Դանկվերտը, ՌԴ գյուղատնտեսության նախարարության միջազգային համագործակցության դեպարտամենտի ղեկավար Դ. Տրեֆիլովը և այլոք: Ողջունելով հյուրերին՝ նախարար Ն. Ֆյոդորովը բարձր է գնահատել գյուղատնտեսության ոլորտում հայ-ռուսական համագործակցությունը և նշել, որ այն բարեկամական և ավանդական բնույթ է կրում: ՌԴ գյուղատնտեսության նախարարը նշել է, որ հայկական արտադրանքն, իր որակի շնորհիվ, մեծ պահանջարկ ունի ռուսական շուկայում: Այդ են վկայում 2013 թվականին պարենային ապրանքների ներմուծման ծավալները, որոնք, նախորդ տարվա համեմատ, աճել են շուրջ 12 %-ով: ՌԴ նախարարի կանխատեսումներով, այդ ցուցանիշը ընթացիկ տարում կպահպանվի, նույնիսկ, ավելացման միտում ունի: Նախարար Ն. Ֆյոդորովը տեղեկացրել է ՀՀ գյուղատնտեսության նախարարին, որ ձկնամթերքի ներմուծումներ իրականացնելու համար ևս երեք հայկական ձկնարդյունաբերական ձեռնարկությունների տրվել են «Ռոսսելխոզնադզոր»-ի արտոնագրեր:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար՝ ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը ևս բարձր է գնահատել երկկողմ հարաբերություններում ակտիվացումը:

2

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ

ՈՍԿԵ ԱՇՈՒՆ - 2014

Ռուսաստանի Դաշնության մայրաքաղաք Մոսկվայում պաշտոնապես մեկնարկել է «Ոսկե աշուն-2014» ագրոպարենային ապրանքների տասնվեցերորդ միջազգային ցուցահանդեսը, որին ներկայացված էր նաև հայկական 15 ընկերությունների արտադրանքը:

Հանդիսավոր բացմանը մասնակցել է նաև ՌԴ վարչապետ Դմիտրի Մեդվեդևը: Ռուսաստանի Դաշնության վարչապետը, ՌԴ գյուղատնտեսության նախարար Նիկոլայ Ֆյոդորովի ուղեկցությամբ, այցելել է նաև հայկական տաղավարներ, որտեղ նրան հյուրընկալել են ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը և ՌԴ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Օլեգ Եսայանը: Դմիտրի Մեդվեդևը, Սերգո Կարապետյանի ուղեկցությամբ, շրջել է հայկական տաղավարներով, որտեղ ներկայացված էր՝ մսամթերքի, հյութերի, թարմ պտուղ-բանջարեղենից պատրաստված պահածոների, կաթնամթերքի, պանրի, ալկոհոլային խմիչքների մեծ տեսականի, այդ թվում՝ ռուսական շուկայում մեծ պահանջարկ վայելող հայկական կոնյակ:

Համտեսելով հայկական կոնյակը՝ ՌԴ վարչապետը նշել է, որ այն բարձրորակ է և մեծ պահանջարկ է վայելում: ՌԴ վարչապետը բարձր է գնահատել նաև հայկական պանրի որակը՝ ընդգծելով, որ կցանկանար ռուսական շուկայում տեսնել հայկական արտադրության այլ կաթնամթերք ևս:

2

1 ✎ ՀԱՆԴԻՊՈՒՄ

ԵՐԿԿՈՂՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՏԻՎԱՑՈՒՄ

Նախարարը կարևորել է նաև հայ գործարարների մասնակցությունը Մոսկվայի քաղաքապետարանի կողմից կազմակերպված գյուղատնտեսական տոնավաճառին և «Ոսկե աշուն-2014» 16-րդ միջազգային գյուղատնտեսական ցուցահանդեսին:

ՀՀ գյուղատնտեսության նախարարն անդրադարձել է նաև դեռևս չկարգավորված հիմնախնդիրներին, որոնցից առավել կարևորներն են՝ ՀՀ-ից ՌԴ կենդանական ծագման արտադրանքի արտահանման արգելքը, ինչպես նաև՝ «Վերին Լարս» սահմանային անցակետի ոչ արդյունավետ աշխատանքը: Նախարարը համոզմունք է հայտնել, որ՝ փաստացի արգելքների հանման պարագայում, հնարավոր է կրկնապատկել ՀՀ-ից ՌԴ գյուղատնտեսական և պարենային ապրանքների արտահանման ծավալները:

Ի պատասխան Հայաստանից մսամթերքի արտահանման վերաբերյալ ՀՀ գյուղատնտեսության նախարարի մտահոգությանը՝ Ս.Դանկվերտը պատրաստակամություն է հայտնել ուսումնասիրություններ կատարել հայկական մսամթերքի շուկայում և նշել է, որ համապատասխան մասնագիտական խումբը Հայաստան կժամանի ս/թ նոյեմբերին:

Անդրադառնալով «Վերին Լարս» սահմանային անցակետի գործունեությանը՝ դեսպան Օ. Եսայանը նշել է, որ հարցը քննարկվել է ՀՀ և ՌԴ վարչապետերի՝ վերջերս Սոչիում կայացած հանդիպման ընթացքում: Սերգո Կարապետյանը հարցի կարևորությունը հաշվի առնելով՝ առաջարկել է Ն. Ֆյոդորովին նույնպես աջակցել վերոնշյալ հարցի կարգավորմանը:

Հանդիպման ավարտին քննարկվել է ՌԴ-ում թողարկվող գյուղատնտեսական տեխնիկան նպաստավոր պայմաններով ՀՀ ներկրելու խնդիրը: Ն. Ֆյոդորովը հայտնել է, որ այն կքննարկվի «Ռոսագրոլիզինգ» կազմակերպության հետ և այդ մասին կտեղեկացնեն հայկական կողմին:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 16. ՊԱՐԵՆԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՐ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՖԵՐՄԵՐՈՒԹՅՈՒՆ. ՄՆԵԼՈՎ ԱՇԽԱՐՀԸ

Սովի դեմ պայքարը հետևողականորեն առաջ է ընթանում ամբողջ աշխարհում, սակայն դեռ շատ անելիք կա, քանի դեռ առկա են շուրջ 805 միլիոն մարդիկ, որոնք զուրկ են բավարար սնվելու հնարավորությունից: Վաթսուներեք զարգացող երկրներ արդեն հասել են Հազարամյակի զարգացման նպատակների՝ սովին վերաբերող թիրախին, այն է՝ մինչև 2015 թ. կիսով չափ կրճատել քրոնիկ թերսնման աստիճանը: Նրանց փորձը ցույց է տալիս, որ սովի դեմ պատերազմում հաղթելու համար անհրաժեշտ է քաղաքական կամք, համակողմանի մոտեցում, հանրային մասնակցություն և ընտանեկան ֆերմերություն:

Ամբողջ աշխարհում ընտանեկան աշխատուժն օգտագործող ֆերմերները առանցքային սոցիալ-տնտեսական, բնապահպանական և մշակութային դերակատարում ունեն, որը, լուրջ մարտահրավերների պայմաններում, հոգածու վերաբերմունքի և ամրապնդման կարիք ունի՝ նորարարության միջոցով: Այս գիտակցությամբ Միավորված ազգերի կազմակերպությունը 2014 թվականը հռչակել է որպես Ընտանեկան ֆերմերության միջազգային տարի: Այս տարվա Պարենի համաշխարհային օրվա թեման ևս նշանավորում է այն ներդրումը, որ ընտանիքի աշխատուժն օգտագործող ֆերմերները կատարում են պարենային ապահովության և կայուն զարգացման հարցում. նրանք կերակրում են աշխարհը և հոգում երկրագնդի մասին:

Աշխարհի 570 միլիոն ֆերմաներից 500 միլիոնը վարում են ընտանիքներ: Նրանք են բնական ռեսուրսների համար հիմնական հոգ տանողները: Որպես ոլորտ՝ նրանք հանդիսանում են աշխարհի ամենախոշոր գործատուն, մատակարարում աշխարհի սննդամթերքի ավելի քան 80 տոկոսը՝ արժեքի առումով, և հաճախ թարմ մթերքի հիմնական արտադրողն են ու բարգավաճում են կաթնամթերքի, թռչնամթերքի և խոզի մսի արտադրության բնագավառում:

➪3

ՓԱՌԱՏՈՆ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿՅԱՆՔ ԵՎ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը մասնակցել է Հայաստանում առաջին անգամ անցկացվող Գյուղական կյանքի և ավանդույթների փառատոնին: Միջոցառումը կազմակերպել էր Գյուղատնտեսության աջակցության «Կանաչ արահետ» հասարակական կազմակերպությունը՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության և Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ:

Փառատոնի նպատակն էր՝ նպաստել Հայաստանում կայուն գյուղատնտեսության զարգացմանը և աջակցել հայ գյուղացիներին՝ ներկայացնել իրենց արտադրանքը: Մասնակցում էին ֆերմերային խմբեր ու գյուղատնտեսական ոլորտի ձեռներեցներ Հայաստանի բոլոր մարզերից: Հայ գյուղատնտեսները փառատոնին ներկայացել էին հանրապետությունում արտադրվող գյուղմթերքի ողջ բազմազանությամբ:

«Պատահական չէ, որ այս հրաշալի փառատոնը կազմակերպվել է հոկտեմբեր ամսին: Հանրապետությունում ավարտին է մոտենում գյուղատնտեսական տարին, և նման միջոցառումը հրաշալի հնարավորություն է՝ հայ գյուղացու ամբողջ տարվա կատարած աշխատանքի արդյունքները ներկայացնելու համար»,- նշել է նախարար Սերգո Կարապետյանը:

Նախարարը նաև համոզմունք է հայտնել, որ այս փառատոնը այսուհետև կլինի շարունակական և աստիճանաբար կընդլայնի իր շրջանակները՝ ընդգրկելով հանրապետության բոլոր մարզերը: Հայաստանում ԵՄ պատվիրակության գյուղատնտեսության գծով ատաշե Ջոն Բարքերն, իր հերթին, առաջարկել է, որպեսզի այս միջոցառումը դառնա ամենամյա և նշվի որպես Բերքի տոն:

1 ✎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ

ՈՍԿԵ ԱՇՈՒՆ - 2014

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը, Ռուսաստանի Դաշնության վարչապետ Դմիտրի Մեդվեդևի հետ հանդիպման ժամանակ, բարձրացրել է «Վերին Լարս» սահմանային անցակետի ոչ արդյունավետ աշխատանքի խնդիրը, քանի որ նրա շուրջօրյա չգործելու պատճառով հնարավոր չի լինում բավարար քանակով արտահանումներ իրականացնել: ՌԴ վարչապետը նշել է, որ բարձրացված հարցին կաշխատեն հնարավորինս սեղմ ժամկետում լուծում տալ: Ցուցահանդեսի շրջանակներում ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը հանդիպումներ է ունեցել նաև Բելառուսի Հանրապետության, Ղրղզստանի, Թուրքմենստանի Հանրապետությունների գյուղատնտեսության նախարարների հետ: Հայաստանի Հանրապետության և Սերբիայի Հանրապետության գյուղատնտեսության նախարարները պայմանավորվել են առաջիկայում ստորագրել համագործակցության համաձայնագիր:

ՁԿՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԱՎԵԼԱՑԵԼ ԵՆ ՁԿԱՆ ԵՎ ՁԿՆԱՄԹԵՐՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԸ

ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի անասնաբուծության և անասնաբուժության վարչության ձկնաբուծության և մեղվաբուծության բաժնի պետ Տիգրան Ալեքսանյանի կարծիքով, նախնական տվյալները փաստում են, որ ընթացիկ տարում ձկան և ձկնամթերքի արտադրական ծավալները կգերազանցեն նախորդ տարվա ցուցանիշները:

Նախարարության օպերատիվ տվյալներով՝ հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում արտադրվել է 8280 տոննա ապրանքային ձուկ: Համեմատության համար նշենք, որ 2013 թ.-ին արտադրվել է 11520 տոննա: Ինչ վերաբերում է ձկան և ձկնամթերքի արտահանմանն, ապա 2013թ.-ին այն կազմել է 2400 տոննա՝ 2012թ.-ի 1800 տոննայի դիմաց: Իսկ 2014թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին արտահանվել է 2000 տոննա ձուկ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը գերազանցել է 0,5 հազար տոննայով:

Ի դեպ՝ հանրապետությունում առկա շուրջ 335 ձկնաբուծական տնտեսություններից գործում է 258-ը: Ջրային ընդհանուր մակերեսը 3542 հեկտար է: Ձկնաբուծական տնտեսությունների 83 %-ը գործում են Արարատի և Արմավիրի մարզերում:

Նելլի Սահակյան

Ագրոլրատու
Հոկտեմբեր 7 - 15, 2014 թ.
Թիվ 26 (2048)

2 ✎ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 16. ՊԱՐԵՆԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՐ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՖԵՐՄԵՐՈՒԹՅՈՒՆ. ՍՆԵԼՈՎ ԱՇԽԱՐՀԸ

Այդուհանդերձ, բազմաթիվ ընտանեկան ֆերմերներ, աշխարհի բնակչության այն 70 տոկոսն են կազմում, ովքեր ապրում են գյուղական բնակավայրերում, պարենային անապահովության պայմաններում: Սա նշանակում է, որ ընտանեկան ֆերմերները դեռևս մեծ ներուժ ունեն, որը կարող են իրացնել ճիշտ աջակցության դեպքում: Զեկույցը մատնանշում է այն մարտահրավերները, որոնց բախվում է ոլորտը, և թե ինչպես կարող ենք համագործակցել՝ դրանք հաղթահարելու նպատակով:

Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում հիմնավոր փոփոխություններ են գրանցվել սննդամթերքի արտադրության, առևտրի և սպառման եղանակներում: Միաժամանակ, գյուղատնտեսական արտադրողականությունն էապես մեծացել է՝ շնորհիվ նաև գիտատեխնոլոգիական առաջընթացի: Աշխարհի աճող և հարաճուն կերպով ուրբանիզացվող բնակչությունն օգտագործում է ֆերմերների շատ ավելի փոքր տոկոսի կողմից արտադրված սննդամթերքը՝ համեմատած Երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդած շրջանի հետ: Գյուղատնտեսական և պարենային արտադրանքի շուկան գլոբալիզացվել է: Աշխարհի մարդկանց գերակշռող մեծամասնության սննդակարգը հիմնված է մթերքի սոսկ չորս տեսակի վրա:

Հարկ է, որ ընտանեկան ֆերմերությունը և դրա ստացած աջակցությունը ճշգրտվեն այնպես, որ կարողանան արձագանքել այս փոփոխվող պայմաններին: Նորարարությունը դրա իրագործման բանալին է. ընտանեկան ֆերմերները պետք է նորացնեն իրենց կողմից կիրառվող համակարգերը, կառավարությունները պետք է արդիականացնեն ընտանեկան ֆերմերության աջակցմանն ուղղված իրենց կողմից իրականացվող հատուկ քաղաքականությունները, արտադրողների կազմակերպությունները նորացվեն՝ ավելի լավ արձագանքելու համար ընտանեկան ֆերմերների կարիքներին, իսկ հետազոտական և լրացուցիչ կրթության հաստատությունները պետք է արդիականացվեն՝ գլխավորապես տեխնոլոգիայի փոխանցման վրա հիմնված, հետազոտություններով առաջնորդվող գործընթացից անցում կատարելով դեպի այնպիսի մոտեցում, որը հենց ընտանեկան ֆերմերներին է օժտում նորարարության կարողությամբ և խրախուսում դրա կիրառումը:

Ի լրումն, նորարարությունն իր բոլոր դրսևորումներում, պետք է լինի ներառական՝ ընտանեկան ֆերմերներին ներգրավելով գիտելիքի ստեղծման, փոխանցման և կիրառման հարցում այնպես, որ նրանք ունենան գործընթացի իրավատիրոջ զգացողություն՝ ուշադրության առնելով թե օգուտները, թե վտանգները և ապահովելով, որ գործընթացն իսկապես համահունչ լինի տեղական իրավիճակներին:

Ակնհայտորեն, ընտանեկան ֆերմերները պետք է բավարար մթերք արտադրեն ոչ միայն սոսկ իրենց, այլև ֆերմերության մեջ չներգրավված գյուղաբնակների և քաղաքային բնակչության համար: Նրանք նաև պետք է եկամուտ ստեղծեն՝ փող, որով կգնեն այնպիսի միջոցներ, ինչպիսիք են սերմերն ու պարարտանյութերը, ինչպես նաև կապահովեն արժանապատիվ կենսամիջոցներ, ինչը հնարավորություն կտա վճարելու իրենց երեխաների կրթության համար և հոգալու այլ կարիքներ: Երբ ընտանեկան ֆերմերներն ավելի ուժեղ են, շահում են բոլորը. տեղերում ավելի մեծ քանակությամբ պարենի առկայությունը վերածվում է ավելի մեծ պարենային ապահովության և հնարավորության՝ տեղական շուկաներում և դրանց համար սննդամթերք արտադրելու և գնելու: Իր հերթին, սա նշանակում է ավելի թարմ և առողջ սնունդ, որը համահունչ է տեղական մշակույթին և արժեվորում է տեղական ուտեստները, նպաստում բարելավված սնուցմանը և մեծացնում տեղական տնտեսությունների դրամական հոսքերը՝ նպաստելով դրանց բարգավաճմանը: Հնարավոր օգուտների ցանկն այդքանով չի սպառվում և ներառում է, օրինակ, տեղական արտադրությունը դպրոցական սննդին շաղկապելը և հնարավորությունը՝ խթանելու արդյունաբերության այն ճյուղերը, որոնք կարող են նպաստել բարգավաճող արտադրությանը:

Այս ջանքերը հանգեցնում են գյուղական բնակավայրերի տարածքային կայուն զարգացմանը՝ գործ, որում ներդրումներ պետք է կատարեն բոլորը՝ համայնքները և կառավարությունները: Երբ սոցիալական ապահովությանը ցուցաբերվող արտադրական աջակցությունը զուգակցում ենք պետական այլ աջակցության հետ, ինչպիսին է առողջապահական հաստատությունների և դպրոցների բարելավված հասանելիությունը, կարող ենք ստեղծել կայուն զարգացման իրապես արգասաբեր շրջան:

Շրջակա միջավայրի կայունությունը չխաթարող և սոցիալական առումով ներառական տնտեսական աճի խթանման ջանքերում հատուկ ուշադրության են արժանի կանայք և երիտասարդները: Կանայք վճռորոշ, թեպետ ոչ միշտ ամբողջովին գնահատված դերակատարում ունեն պարենային համակարգում՝ սկսած սննդի արտադրությունից և վաճառքից, մինչև ընտանիքներում պատշաճ սնուցման ապահովումը: Միևնույն ժամանակ, հարկ է կանխել գյուղաբնակ երիտասարդների զանգվածային արտահոսքը, ովքեր հաճախ հարկադրված են՝ կյանքի բարելավման ձգտելիս, իրենց հայացքը հառել այլուր: Մենք պետք է պայմաններ ստեղծենք, որ երիտասարդները կյանքը գյուղական բնակավայրերում ընկալեն որպես հնարավորություններ տվող ապագա. սրա բաղկացուցիչն են վերապատրաստման ծրագրերը, որոնք կարող են երիտասարդներին ձեռնարկատիրական սեփական ներուժը գործի դնելու հնարավորություն տալ:

Մինչ սրընթաց մոտենում ենք Հազարամյակի զարգացման նպատակների վերջնաժամկետին, մենք նաև համագործակցում ենք՝ ստեղծելու այն կայուն, սովից զերծ ապագան, որին ձգտում ենք: Ընտանեկան աշխատուժն օգտագործող ֆերմերներն այս ջանքերի գլխավոր գործող անձինք են:

Խոսե Գրացիանո դա Սիլվա
Միավորված ազգերի կազմակերպության Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) գլխավոր տնօրեն

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՄՈԴԵԼ ՏԱՎՈՒՇՈՒՄ

Օքսֆամի հայաստանյան գրասենյակն, իր գործընկերների՝ «Բի էս Սի» Բիզնեսի աջակցման կենտրոնի, «Նոր Հորիզոն» վարկային կազմակերպության, Orange հիմնադրամի, Ֆրանսիայի Ռոն-Ալպ ռեգիոնի, G2IA և CARE կազմակերպությունների հետ համատեղ, կազմակերպել էր «Այրում Ֆրութս» մրգի և հատապտուղների վերամշակման գործարանի բացման հանդիսավոր արարողություն, որը տեղի ունեցավ Տավուշի մարզի Այրում համայնքում:

Բացմանը մասնակցում էին ՀՀ գյուղատնտեսության և տարածքային կառավարման նախարարությունների, մարզային և տեղական կառավարման մարմինների, միջազգային և տեղական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Գործարանի սեփականատերը «Լճկաձոր» գյուղատնտեսական սպառողական կոոպերատիվն է:

«Գործարանը կապահովի ավելի քան 60 աշխատատեղ՝ հատկապես համայնքի կանանց համար, ինչպես նաև կայուն մթերման շուկա՝ ընդգրկելով Այրում համայնքին հարակից 10 գյուղերի ավելի քան 2000 բնակչի: Գործարանում պլանավորվում է վերամշակել տարեկան մինչև 500 տոննա միրգ և հատապտուղ (ջեմեր, մուրաբաներ, կոմպոտներ և չրեր)»,- ասաց «Այրում Ֆրութս» ՍՊԸ տնօրեն, «Լճկաձոր» գյուղատնտեսական սպառողական կոոպերատիվի նախագահ Ռուսլան Անտոնյանը:

Գործարանը հիմնադրվել է Օքսֆամի «Ձեռնարկությունների զարգացման ծրագրի» շրջանակներում: Օքսֆամը 2011 թվականից ի վեր կոոպերատիվի հիմնադրման, համայնքային ենթակառուցվածքների սառնարանային տնտեսության կառուցման, գործարանի շենքի վերակառուցման, վերանորոգման և արտադրության մեկնարկի համար ներդրել է ավելի քան 250 հազար ԱՄՆ դոլար: «Այս գործարանն աննախադեպ, բացառիկ և նորարարական բիզնեսի մոդել է, որը հիմնականում սոցիալական ձեռնարկության օրինակ է: Այն տնօրինվում և կառավարվում է Օքսֆամի և վերջինիս կողմից ստեղծված համայնքային կոոպերատիվի կողմից: Ձեռնարկությունն իր եկամուտների զգալի մասը պետք է ուղղի համայնքների սոցիալական խնդիրների լուծմանը», - ասաց Օքսֆամ միջազգային բրիտանական կազմակերպության հայաստանյան գրասենյակի տնօրեն Մարգարիտա Հակոբյանը:

Գյուղատնտեսության փոխնախարար Ռոբերտ Մակարյանն այս ձեռնարկումը կարևորեց՝ հատկապես իրացման կազմակերպման տեսանկյունից: «Մենք ոչ միայն խոշոր, այլ նաև նոր տեխնոլոգիաներով փոքր և միջին հզորության ձեռնարկությունների ստեղծումն ենք խրախուսում: Համոզված եմ, որ հետագայում ևս այսպիսի ձեռնարկումներ կլինեն»,- ասաց փոխնախարարը:

Ի դեպ, «Բի էս Սի» Բիզնեսի աջակցման կենտրոնը հանդիսանում է ծրագրի բիզնես պլանավորման, նախագծի կառավարման և իրականացման պատասխանատու: Իսկ «Նոր Հորիզոն» վարկային կազմակերպությունը տրամադրել է 75 հազար ԱՄՆ դոլարի վարկային միջոցներ:

G2iA-ի կողմից իրականացվող «Գյուղական զարգացման» ծրագրի շրջանակներում, Ֆրանսիայի Ռոն-Ալպ ռեգիոնի և Orange հիմնադրամի աջակցությամբ, 2013-2014 թվականներին Այրումի պահածոների գործարանի համար նախատեսվել է 80 հազար ԱՄՆ դոլարի ներդրում. որից արդեն ներդրվել է շուրջ 23 հազար ԱՄՆ դոլարը:

«CARE International»-ի կովկասյան գրասենյակն՝ իր JOIN Ծրագրի շրջանակում, «Լճկաձոր» գյուղատնտեսական սպառողական կոոպերատիվին է հատկացրել 24700 ԱՄՆ դոլար արժողությամբ սարքավորումներ:

Նշենք նաև, որ JOIN ծրագիրը ֆինանսավորվում է Ավստրիական զարգացման գործակալության կողմից: «Մենք նկատեցինք, որ որոշ ապրանքատեսակներ արտադրվում են անտառներից հավաքվող վայրի հատապտուղներից և պտուղներից, ինչը հնարավորություն է տալիս, որպես օրգանական մրցունակ արտադրանք, արագ սերտիֆիկացնել այն: Այդպիսով, կստեղծվեն շուկայահանման ավելի մեծ հնարավորություններ»,- ասաց ՀՀ գյուղատնտեսության փոխնախարար Արմեն Հարությունյանը: Ինչ վերաբերում է բարձրորակ արտադրանքի իրացմանն, ապա, ըստ նախնական տվյալների, այն հիմնականում արտահանվելու է ՌԴ:

Հայրենիքը սկսվում է սահմանամերձ գյուղերից: Եթե գյուղերը կայացած ու ամուր են՝ ամուր է նաև երկիրը: Հեռավոր, սահմանամերձ համայնքների զարգացումը Օքսֆամի ծրագրերի անկյունաքարն է: «Մենք սատարում ենք մարդկանց, որ ի զորու լինեն սատարելու ուրիշներին»: Ահա Օքսֆամի կարգախոսը, որով կազմակերպությունն առաջնորդվում է Հայաստանում՝ իր գործունեության 20 տարիների ընթացքում:

Նելլի Սահակյան

ԴԻՄԱՆԿԱՐ

ԿԱՐԵՎՈՐԸ ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԱՆՔՆ Է

Ռաիսա Խաչատրյանը, Կոտայքի մարզի Սոլակ համայնքում այժմ մի խումբ երեխաների և պատանիների ուսուցանում է խոհարարության և հետաքրքիր մատուցման գաղտնիքները: Տիկին Ռաիսան պատմում է, որ դեռևս 2009 թ.-ից մասնակցել է «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ի կողմից կազմակերպած սեմինարներին, դասընթացներին և միջոցառումներին: Իսկ 2012 թ. արդեն ակտիվորեն իր մասնակցությունն է ունեցել ՀԿ-ի՝ գյուղում տարվող աշխատանքներին: Գյուղում գործում է «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ի կողմից ստեղծված գյուղատնտեսության աջակցության կենտրոնը: Իսկ նա կենտրոնի անմիջական համակարգողն է: Ջերմատան 90 մ² տարածքում, կենտրոնի 5 կանանց մասնակցությամբ, մշակում են տարբեր մշակաբույսեր. «Փորձում ենք յուրաքանչյուր սեզոնին,- ինչպես տիկին Ռաիսան է ասում,- զբաղվել թունանյութերից զերծ բանջարեղեն արտադրելով: Նախ վաղ գարնանը սածիլներ ենք աճեցնում, իսկ դրանց վաճառքից հետո, մշակում ենք լոբի, լոլիկ, վարունգ, կանաչեղեն: Մշակության ընթացքում կիրառում ենք միմիայն մեր կողմից պատրաստված կենսահումուսը և զերծ ենք մնում քիմիական պարարտանյութերից»:

ՀԿ-ի միջոցով արտադրությունը ձեռք է բերել 11 արևային չորանոց, որտեղ չորացնում են գյուղում իրենց աճեցրած արևահամ մրգերը: Կենտրոնում ընդգրկված կանայք չեն դժգոհում, կարևորը հաճելի և եկամտաբեր զբաղմունք ունեն: Այժմ չորանոցների թիվը հասել է 50-ի: Պատրաստի չրերն իրացնում են տեղական շուկաներում: Արևային չորանոցներում պատրաստած չրերի և մշակված կենսահումուսի վաճառքից ստացված եկամուտներով, կարողացել են ավելացնել նաև չորանոցների թիվը:

Տիկին Ռաիսան պատմում է, որ երեխաների ձեռքի աշխատանքները ներկայացրել են ցուցահանդես- մրցույթների: ՀԿ-ի միջնորդությամբ կարողացել են շահել նույնիսկ 2 բիզնես ծրագիր: «Դպրոցահասակ երեխաների ակնարկների» մրցույթում շահել են 3-րդ պատվավոր մրցանակը: Երեխաները կարողացել են նույնիսկ թափոններից հետաքրքիր և կիրառելի իրեր պատրաստել:

Չեմ դժգոհում իմ անցած ուղղուց, փորձում եմ միշտ առաջ նայել: Շատ դժվարություններ ենք տեսել, բայց շատ բաների էլ հասել ենք միասին աշխատելու և սովորելու արդյունքում: Ըստ Ռաիսայի, սովորելու համար երբեք էլ ուշ չէ:

Սոլակում գյուղատնտեսության աջակցության կանանց կենտրոնը շատ հեռանկարներ ունի: Մտադրվել են համայնքում նաև հյուրատուն բացել և զարգացնել ագրոտուրիզմը: Տարածքն արդեն ընտրել են, նույնիսկ, արևային լոգարան և զրուցարան են կառուցել: Տիկին Ռաիսան նշում է, որ նոր գաղափարներ շատ կան, ժամանակի ընթացքում, համատեղ աշխատանքի միջոցով, կկարողանան դրանք իրականություն դարձնել: Գյուղատնտես կինը երազանքներ շատ ունի. «Որ մի կինն է հեռու երազելուց. մեզանից յուրաքանչյուրն էլ հոգու խորքում նվիրական երազանք ունի: Ինչ վերաբերում է աշխատանքին, շատ եմ ուզում, որ գյուղում վերամշակման արտադրամաս գործի, և գյուղացիները կարողանան իրենց միրգն ու բանջարեղենը վերամշակել»:

Տիկին Ռաիսան ապրում է հայկական ավանդական ընտանիքում. փորձում է ազատ ժամանակը տրամադրել թե՛ ընտանիքին, թե՛ աշխատանքին, քանի որ ընտանիքի գրկում է կարողանում մոռանալ առօրյա հոգսերն ու դրական լիցքեր ստանալ: Եթե կյանքը վերապրելու հնարավորություն ունենար, տիկին Ռաիսան նախընտրում է վերապրել երիտասարդ տարիները:

Լիանա Շախնազարյան

ՄՐՑՈՒՅԹ

«FSC ուրբաթը» Հայաստանում

Ամենամյա «FSC ուրբաթ»-ի փոնակատարության շրջանակներում, ԱՊՀ երկրների համար Անտառների հոգաբարձուների խորհուրդը (FSC) և WWF-Հայաստանը նախաձեռնել են պատանեկան նկարչական մրցույթ՝ «Իմ հայրենի անտառը» խորագրով: FSC-ն սույն մրցույթը կազմակերպում է ԱՊՀ 11 երկրներում: Մրցույթի հիմնական նպատակն է՝ պատկերել ԱՊՀ տարբեր երկրների անտառները, ցուցադրել անտառային էկոհամակարգերի յուրահատկությունը և բարձրացնել հասարակության իրազեկվածությունը՝ անտառային պաշարների պատասխանատու կառավարման վերաբերյալ:

WWF-Հայաստանը մասնակցում է այս նախաձեռնությանը՝ անտառային ծրագրերի, մասնավորապես Եվրամիության (ԵՄ) կողմից ֆինանսավորվող Անտառի տրանսֆորմացիայի ծրագրի, ինչպես նաև ԵՄ և Ավստրիական զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող ENPI-FLEG II ծրագրի համագործակցության շրջանակներում: WWF-Հայաստանը մրցույթի հրավերներն ուղարկել է Հայաստանի 6 դպրոցների, որոնցից 4-ը գտնվում են՝ Սարամեջ, Լեռնանցք, Դովեղ, Բարեկամավան և Տաթև համայնքների տարածքներում, մեկը՝ Երևանում:

Մրցույթի մասնակիցները 5-ից 8-րդ դասարանի աշակերտներ են: Յուրաքանչյուր երկրում 12 լավագույն աշխատանքները կազմակերպիչների կողմից կպարգևատրվեն հուշանվերներով, ինչպես նաև կներառվեն տվյալ երկրի 2015 թ.-ի համար FSC հավաստագրված տպագրատանը հրատարակվելիք օրացույցում: Դպրոցները կստանան օրացույցի օրինակները: Յուրաքանչյուր երկրից 12 աշխատանք կմասնակցի Մոսկվայում կայանալիք եզրափակիչ մրցույթին: Յուրաքանչյուր երկրից մեկ կամ երկու (ընդամենը 12) լավագույն աշխատանքներ կընդգրկվեն 2015թ.-ի ԱՊՀ երկրների FSC պաշտոնական օրացույցում: Եզրափակիչ մրցույթը կկազմակերպվի սույն տարվա վերջին:

ՏԱՎԱՐԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐԱԿԱԼՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների համարակալման, հաշվառման և գրանցման նպատակը՝ առկա գլխաքանակի, դրանց սեռի, ցեղի և գտնվելու վայրի, տեղաշարժի մասին հավաստի տեղեկությունների ստացումն ու անասնաբուծական արտադրանքի ծավալների կանխատեսումն է, վաճառվող մսի և մսամթերքի նկատմամբ սպառողների վստահության բարձրացումը, պետական պատվերի շրջանակներում հակահամաճարակային միջոցառումների լիարժեք իրականացումը: Այդ գործընթացը կարևորվում է նաև հիվանդությունների կանխարգելման և անասնաբուժական վերահսկմանը նպաստելու տեսանկյունից: Այն հնարավորություն է ընձեռում իրականացնել անասնաբուծական մթերքի որակի փորձաքննություն և երկրի ներսում կենդանիների տեղաշարժի վերահսկում: Այն միաժամանակ նպաստավոր պայմաններ է ստեղծում՝ միջազգային ստանդարտներով սահմանված պահանջների ապահովմամբ, արտաքին շուկա մուտք գործելու համար: Թեմայի առնչությամբ զրուցեցինք ՀԱԱՀ գյուղատնտեսական կենդանիների կերակրման և բուծման ամբիոնի պրոֆեսոր, գյուղատնտեսական գիտությունների դոկտոր Գառնիկ Գիլոյանի հետ:

- Պրն. Գիլոյան, մինչ այժմ ՀՀ-ում կենդանիների համատարած համարակալում, հաշվառում և գրանցում չի իրականացվել: Միայն Վայոց ձորի մարզում է 2012թ. այդ ուղղությամբ իրականացվել փորձնական ծրագիր: Որքանո՞վ է կարևորվում համարակալման, հաշվառման համակարգի ներդրումը:

- Առանց տոհմային հաշվառման հնարավոր չէ համակարգել կենդանիների կենսաբանական-տնտեսական առանձնահատկությունների կատարելագործումը, հաշվարկել մթերատվության ցուցանիշները, գնահատել այն: Մասնագիտական այդ աշխատանքների կատարման համար տնտեսություններում անպայման պետք է ընդգրկել սելեկցիոն-անասնաբույծի, որպեսզի վերջինս կազմակերպի գյուղատնտեսական կենդանիների հաշվառումը, կազմի կերաբաժինները, մշակի աշխատակարգ, կենդանինների արհեստական սերմնավորման հատուկ փուլային և ծնի պլանային ծրագրեր և այլն:

Մասնագետն այդ ամենը պետք է գրանցի տոհմային հաշվառման մատյանում: Կենդանիների համար կկազմվեն նաև տոհմային քարտեր, որոնցում կնշվեն կենդանու ծագումը, մթերատվության, ֆենոտիպային և գենոտիպային գրանցման ցուցանիշները:

- Իսկ ինչպե՞ս է որոշվում, օրինակ, կաթնատու տավարի մթերատվությունը, ի՞նչ ցուցանիշներ են հաշվի առնվում:

- Ամիսը առնվազն մեկ անգամ պետք է չափվի կենդանու կաթի քանակությունը, որոշվի յուղի, սպիտակուցի պարունակությունը և գրանցվի: Այնուհետև մասնագիտորեն պետք է հաշվարկվեն լակտացիայի և վերջինիս 305 օրվա ցուցանիշները, յուղի և սպիտակուցի միջին տոկոսը, կաթում ամսվա կտրվածքով, կաթնայուղի և կաթնասպիտակուցի քանակությունը:

- Բացի վերը նշվածից, ուրիշ ի՞նչ առավելություններ ունի գյուղատնտեսական կենդանիների համարակալման, հաշվառման համակարգի ներդրումը հանրապետությունում:

- Ներկայումս մեր հանրապետությունում արտադրվում է բնապահպանորեն մաքուր, որակյալ, համային հատկանիշներով աչքի ընկնող գյուղատնտեսական ծագման մթերք: Եվ քանի որ համարակալման, հաշվառման և գրանցման աշխատանքների իրականացումով բարձրանում է նաև անասնաբուծական սպասարկման մակարդակը, ապա մեծանում է նաև վստահությունը՝ սննդամթերքի անվտանգության տեսանկյունից: Այն հնարավորություն կընձեռի արտահանել հայրենական արտադրանքը միջազգային շուկա, ինչի արդյունքում՝ կավելանան գյուղացու եկամուտները, կբարելավվեն գյուղացիական տնտեսությունները: Բացի այդ, համարակալումը հնարավորություն է տալիս ճշտությամբ վարել կենդանիների ծագումնաբանությունը և սելեկցիոն աշխատանքները, որը շարունակելի գործընթաց է:

Նելլի Սահակյան

Ագրոլրատու
Հոկտեմբեր 7 - 15, 2014 թ.
թիվ 26 (2048)

ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Շատ են դեպքերը, երբ իշխանությունները բազմաթիվ նոր կանոնակարգեր և որոշումներ են ընդունել կոոպերատիվների համար, որպեսզի դրանք կարողանան առավել արդյունավետ աշխատել: Այդ որոշումներն արդյունավետ են, եթե նպաստում են կոոպերատիվների ինքնավարությանը, ինքնաֆինանսավորմանը և ինքնահաստատմանը: Սա նշանակում է, որ կան հիմնարար իրավական պայմաններ, որոնց միջոցով խումբը կարող է ընտրել իր ղեկավարությանը, շուկայահանել իր արտադրանքը, վաստակել եկամուտներ, ընդունել սեփական որոշումներ ֆինանսական օգուտների բաշխման վերաբերյալ: Կոոպերատիվը կարող է ՀՀ օրենսդրությամբ սահմանված և միջազգային համաձայնագրերով վավերացված արտադրական, տնտեսական, ֆինանսական և տարաբնույթ հարաբերությունների մեջ մտնել ՀՀ տարածքում և արտասահմանում գտնվող բոլոր տնտեսվարող պետական ու մասնավոր կազմակերպությունների, ձեռնարկությունների հետ այն ոլորտներում, որոնք կնպաստեն նրա արդյունավետ գործունեությանը և չեն խաթարի երկրի տնտեսական անվտանգությունը: Քանի որ կոոպերատիվի տնտեսական գործունեությունը հիմնված է ամբողջական ինքնուրույնության, ինքնաֆինանսավորման և տնտեսական գործունեության արդյունքների պատասխանատվության վրա, ապա չի կարող որևէ մարմին միջամտել կոոպերատիվի գործունեությանը:

Կոոպերատիվն իրավունք ունի ինքնուրույն կնքելու պայմանագրեր, հումք ձեռք բերելու աղբյուրներ և իրացման շուկաներ ընտրելու: Պետական ձեռնարկությունների, կազմակերպությունների և այլ կոոպերատիվների միջև հարաբերությունները կարգավորվում են պայմանագրերի միջոցով: Պայմանագիրը իրավական փաստաթուղթ է, որը կարգավորում է կոոպերատիվի և այլ սուբյեկտների, քաղաքացիների միջև բոլոր տնտեսաարտադրական հարաբերությունները: Պայմանագրի կնքումը, ներառյալ գործընկերոջ ընտրությունը՝ ըստ պայմանագրերի, կոոպերատիվի բացառիկ իրավասությունն է:

Կոոպերատիվները ստեղծման պահից ստանձնում են որոշակի պատասխանատվություն՝ պետության առջև: Գրանցման պահից հաշվառվում են սոցիալական ապահովագրության հիմնադրամում և հարկային մարմիններում, կատարում սահմանված վճարները:

Կոոպերատիվը լուծում է համաժողովրդական կարևոր խնդիրներ, և պետությունն աջակցում է կոոպերատիվին, նրա ստեղծման, գործունեության, կայունության պահպանման բոլոր փուլերում և ապահովում դրանց իրականացումը՝ համապատասխան ֆինանսական, իրավական լծակներով ու մեխանիզմներով: Վերջինս դրսևորվում է՝

1. պետական բյուջեով սահմանված ֆինանսական միջոցների տրամադրմամբ՝ նպատակային ծրագրերի համար, մասնավորապես՝գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացման աջակցության, հիմնական ուղղություններով մշակում և հաստատում է գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացման պետական աջակցության ծրագրերը,

2. վարկային երաշխիքների տրամադրմամբ,

3. գյուղատնտեսական գործունեություն վարող սուբյեկտների համար հարկային միատեսակ դաշտ ապահովելով,

4. օրենքների և իրավական նորմատիվային ակտերի ստեղծմամբ,

5. մատչելի տեղեկատվական, խորհրդատվական ծառայություններով և որակյալ կադրերով ապահովմամբ:

6. ՀՀ օրենսդրությանը չհակասող այլ լծակներով և մեխանիզմներով պետական քաղաքականությունն ուղղվում է՝

- Ագրարային արտադրության համար անհրաժեշտ բնական ռեսուրսների /հողի, ջրային ռեսուրսների/ պահպանմանը և արդյունավետ օգտագործմանը,
- գյուղատնտեսության և նրա գերակա ոլորտների առաջնահերթությունների կայունության ապահովմանը,
- գյուղատնտեսական արտադրության գիտատեխնիկական մակարդակի բարձրացմանը,
- գյուղատնտեսության զարգացման արդյունավետ մոդելի մշակմանը,
- արտադրող, վերամշակող և իրացնող կազմակերպություններին մեկ կոոպերատիվի կազմում ընդգրկելու հնարավորությունների ստեղծմանը,

6

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ԿՈՎԵՐԻ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ ԵՎ ԽՆԱՄՔԸ ԶՄԵՌԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Մսուրային պահվածքի փևողությունը, տարվա ընթացքում, կազմում է ավելի քան 7 ամիս (նոյեմբեր-ապրիլ): Այդ ժամանակաընթացքում ստացվում է տարեկան արտադրվող կաթի մոտ կեսը: Կովերի ծինը հիմնականում տեղի է ունենում մսուրային շրջանում: Հետևաբար, նրանց բավարար կերակրումն ու խնամքն այդ ժամանակաընթացքում շատ կարևոր է մթերատվության բարձրացման գործում: Կովերի ռացիոնալ կերակրումը նորմավորված լիարժեք կերակրումն է, երբ հաշվի է առնվում կենդանիների պահանջը բոլոր անհրաժեշտ սննդանյութերի նկատմամբ, իսկ սննդարար նյութերի պահանջը կախված է կովի կաթնատվությունից, կենդանի զանգվածից, տարիքից, հղիության շրջանից, սնվածությունից և այլ գործոններից: Հղի կովերին ծնելուց 50-60 օր առաջ անհրաժեշտ է ցամաքեցնել /դադարեցնել կթելը/: Այդ ժամանակաշրջանը, որը կոչվում է ցամաքի շրջան, հարկավոր է, որ կովը հանգստանա, օրգանիզմում կուտակվեն սննդարար նյութերի անհրաժեշտ պաշար՝գալիք լակտացիայում որակով և ավելի շատ կաթ արտադրելու համար, ինչպես նաև կնպաստի արգանդում պտղի լավ աճին: Ծնելու պահին կովը պետք է ունենա լավ սնվածություն, ցանկալի է, որ հղիության վերջին երկու ամսում կովերի կենդանի զանգվածն ավելանա 45-55 կգ-ով, օրական միջին քաշաճը կազմի 800-900գ: Հղի-ցամաք կովերի կերակրման համար առաջարկվում են կերակրման հետևյալ չափաքանակները /աղյուսակ 1/:

Այս նորմաները նախատեսված են միջին սնվածություն ունեցող կովերի համար, եթե կովը նիհար է, ապա պետք է ավելացնել 1-2 կերի միավոր և համապատասխան քանակի մյուս սննդանյութեր: Անասնատերը, բերված կերանորմաների հիման վրա, կազմում է կերաբաժին: Հղի-ցամաք կովի կերաբաժինը պետք է բաղկացած լինի հիմնականում տնտեսությունում արտադրված կոպիտ և հյութալի կերերից: Որպես օրինակ՝ ներկայացնենք 3000 կգ կաթնատվություն ունեցող, 500 կգ կենդանի քաշով հղի-ցամաք կովի կերաբաժնի մի տարբերակը: Կերաբաժինը բաղկացած է 6 կգ խոտից, 4 կգ ծղոտից, 10 կգ սիլոսից, 4 կգ արմատապտուղներից և 1.5 կգ խտացրած կերից: Այն պարունակում է 7.8 կերի միավոր, կամ 9.36 էներգետիկ կերի միավոր, 11.4 կգ չոր նյութեր, 796 գ. մարսելի պրոտեին և այլ սննդարար նյութեր, որոնք նախատեսված են կերակրման նորմաներով: Անասնատերը, ելնելով իր տնտեսության կերերի առկայությունից, մեկ կերատեսակը կարող է փոխարինել մյուսով՝պահպանելով կերանորմաներով սահմանված սննդանյութերի քանակը կերաբաժնում: Հղի-ցամաք կովերի նկատմամբ պետք է լինել ուշադիր, նրանց կերակրում և ջրում են օրական 3 անգամ, նույն ժամերին, զբոսանքի հանում ամեն օր՝ առնվազն 3 ժամ տևողությամբ: Կենդանիներին չի կարելի կերակրել անորակ կերերով /փչացած,

սառած սիլոս, ճակնդեղ/, ինչպես նաև՝մզուկ /ժոմ/, տկուցք /բարդա/, գարեջրի դիրտ քանի որ դրանք կովերի վիժման պատճառ կարող են դառնալ: Կթու կովերի սննդանյութերի պահանջը որոշելիս, հաշվի են առնում նրանց օրական կաթնատվությունը, կենդանի զանգվածը, սնվածությունը և լակտացիայի շրջանը: Կթու կովերի կերակրման չափաքանակները ներկայացվում է աղյուսակ 2-ում: Դրանք նախատեսված են միջին սնվածություն ունեցող կովերի համար. իսկ առաջին և երկրորդ ծիների կովերի կերակրման դեպքում՝ անհրաժեշտ է այդ նորմաները բարձրացնել շուրջ 10 տոկոսով:

Ելնելով կերային նորմաներից /աղյուսակ 2/, նաև հաշվի առնելով տվյալ տնտեսությունում առկա կերերի քանակը և տեսականին՝ անասնատերը կովերի համար կազմում է կերաբաժին: Օրինակ՝ 12 կգ օրական կաթ տվող 500 կգ կենդանի զանգվածով լիատարիք կովերի կերակրման համար առաջարկվում է հետևյալ կերաբաժինը՝ խոտ՝8 կգ, ծղոտ՝ 4 կգ, սիլոս՝ 15 կգ, ճակնդեղ՝ 5 կգ և խտացրած կեր՝ 3 կգ: Այդ կերերի սննդարարությունը կազմում է 10.65 կերի միավոր, 12.78 էներգետիկ կերի միավոր, 16.9 կգ չոր նյութեր, 1142 գ մարսելի պրոտեին և անհրաժեշտ այլ սննդանյութեր, որոնք նախատեսված են կերակրման նորմաներով և բավարարում են կենդանու պահանջը սննդանյութերի նկատմամբ: Անհրաժեշտ

6

Հղի-ցամաք կովերի կերակրման նորմաները /օրական մեկ գլխին/

Աղյուսակ 1

Ցուցանիշները	Սպասվելիք կաթնատվությունը ծնելուց հետո, կգ					
	3000		4000		5000	
Կենդանի զանգվածը, կգ	400	500	400	500	500	600
Կերի միավոր	6.8	7.7	7.9	8.8	9.9	10.7
Էներգետիկ կերի միավոր	8.0	8.9	9.2	10.5	11.6	12.5
Փոխանակային էներգիա, ՄՋ	80	89	92	105	116	125
Չոր նյութեր, կգ	9.4	10.5	9.6	11.0	11.6	12.5
Հում պրոտեին, գ	1115	1310	1310	1450	1675	1810
Մարսելի պրոտեին, գ	725	820	850	970	1090	1175
Հում թաղանթանյութ, գ	2350	2750	2305	2640	2670	2900
Օսլա, գ	640	750	750	850	1175	1270
Շաքար, գ	580	655	680	775	930	1000
Հում ճարպ, գ	200	230	245	280	335	365
Կերակրի աղ, գ	40	50	45	55	60	70
Կալցիում, գ	60	80	70	90	95	110
Ֆոսֆոր, գ	35	45	40	50	55	65
Կարոտին, մգ	295	345	385	440	495	535

5 ⇦ ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

• գյուղատնտեսական ապահովագրական միասնական համակարգում կոոպերատիվների ընդգրկմանը,

• գյուղական տարածքների, մասնավորապես՝ լեռնային և սահմանամերձ տարածաշրջաններում ստեղծվող կոոպերատիվներին արտոնությունների տրամադրմանը և համահարթեցման քաղաքականության իրականացմանը,

• կոոպերատիվների արտադրանքի նկատմամբ քվոտավորման մեխանիզմների մշակմանը և կիրառմանը,

• գյուղատնտեսական արտադրության արդյունավետության բարձրացման այլ ուղղություններին:

Կոոպերատիվը պարտավոր է կատարել բյուջեի նկատմամբ սահմանված պարտավորությունները և ներկայացնել հաշվետվություններ՝ ծառայություններին, հարկային տեղական մարմիններին:

Կառավարությունը չպետք է միջամտի կոոպերատիվի ներքին գործերին և կոոպերատիվի արդյունավետության բարձրացման, կոոպերատիվի զարգացման բոլոր փորձերը պետք է թողնել կոոպերատիվի անդամներին: Կոոպերատիվների քաղաքականացումը կոոպերատիվների անխուսափելի կործանումն է: Ցանկալի տնտեսական և սոցիալական պայմանների հասնելու համար կոոպերատիվների ունեցած ներուժը օգտագործել անդամների կարիքները բավարարելու նպատակով:

Կառավարության կողմից բազմաթիվ փորձեր են արվել խթանելու կոոպերատիվների ձևավորմանը: Այս գործընթացն, այնուամենայնիվ, առավել արդյունավետ է լինում, երբ այն սկսվում է հենց անդամներից, այսինքն՝ կոոպերատիվի անդամները գիտակցում են կամավոր միավորման ու գործակցության առավելությունները: Ինչ վերաբերում է պետական մակարդակով այդ գործընթացի խթանմանը, ապա դա առավելապես պետք է իրականացնել կոոպերատիվների ձևավորման և բնականոն զարգացման օրենսդրական հիմքերի և նպաստավոր բիզնես միջավայրի ստեղծման միջոցով:

Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳ

Դիջիթեք էքսպո-2014 ամենամյա տեխնոլոգիական ցուցահանդեսին ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը, «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» ՀԿ-ի և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) հետ համատեղ, ներկայացրեց Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը (ՀԿՏՀ):

Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը ստեղծվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարության նախաձեռնությամբ՝ «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» ՀԿ-ի կողմից և ներդրվում է Հայաստանի համայնքներում՝ համայնքային կառավարման արդիականացման նպատակով: Համակարգի ներդրման աշխատանքներին աջակցում է GIZ-ը՝ «Համայնքների զարգացում Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակում: 2014 թ.-ի սեպտեմբերի 1-ի դրությամբ, ՀԿՏՀ ներդրված է մոտ 580 համայնքում, իսկ 233 համայնքում այն ծառայում է նաև որպես համայնքի համացանցային պաշտոնական կայք:

Ծրագրի պատասխանատուները տաղավարի այցելուներին ներկայացրին համակարգի ընձեռած հնարավորությունները՝ նշելով, որ այն ուղղված է ՏԻՄ-երի կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը, համայնքներում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության ներդրմանը: Համակարգի ինտեգրումը պետական կառավարման մարմիններում գործող էլեկտրոնային համակարգերին ապահովում է հանրային հատվածի էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն երկրի ողջ տարածքում:

Ցուցադրության ընթացքում մի շարք համայնքների ներկայացուցիչներ նաև հնարավորություն ունեցան պատասխանատուների հետ քննարկել ծրագրի ընթացքին և հետագա զարգացումներին վերաբերող հարցեր:

5 ⇦ ՄԱՄՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ԿՈՎԵՐԻ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ ԵՎ ԽՆԱՄՔԸ ՁՄԵՌԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Կերակրման նորմաներ՝ լիատարիք կթու կովերի համար /օրական մեկ գլխին/

Աղյուսակ 2

Ցուցանիշները	Օրվա կիթը 3.8-4.0 % յուղայնությամբ, կգ						
	8	10	12	14	16	18	20
	Կենդանի զանգվածը՝ 400 կգ						
Կերի միավոր	8	9	10	11	12	13.1	14.2
Էներգետիկ կերի միավոր	9.5	10.6	11.7	12.7	13.8	14.9	16.8
Փոխանակային էներգիա, մջ	95	106	117	127	138	149	168
Չոր նյութեր, կգ	10.7	11.6	12.5	13.3	14.1	14.9	15.7
Հում պրոտեին, գ	1170	1355	1540	1700	1845	2015	2200
Մարսելի պրոտեին, գ	760	880	1000	1120	1220	1360	1470
Հում թաղանթանյութ, գ	3000	3200	3480	3590	3670	3750	3790
Օսլա, գ	900	1100	1300	1500	1700	1900	2120
Շաքար, գ	600	740	880	1020	1160	1300	1440
Հում ճարպ, գ	225	225	310	350	390	430	475
Կերակրի աղ, գ	52	60	68	76	84	92	100
Կալցիում, գ	52	60	68	76	84	92	100
Ֆոսֆոր, գ	36	42	48	54	60	66	72
Կարոտին, մգ	320	385	450	495	540	590	640
	Կենդանի զանգվածը՝ 500 կգ						
Կերի միավոր	8.6	9.6	10.6	11.6	12.6	13.6	14.6
Էներգետիկ կերի միավոր	10.4	11.5	12.6	13.7	14.8	15.9	17.0
Փոխանակային էներգիա, մջ	104	115	126	137	148	159	170
Չոր նյութեր, կգ	12.3	13.2	14.1	14.9	15.8	16.5	17.3
Հում պրոտեին, գ	1260	1445	1610	1780	1980	2140	2320
Մարսելի պրոտեին, գ	820	940	1060	1185	1310	1435	1560
Հում թաղանթանյութ, գ	3450	3650	3850	4030	4080	4130	4150
Օսլա, գ	970	1200	1435	1665	1895	2125	2355
Շաքար, գ	645	760	880	1000	1125	1250	1400
Հում ճարպ, գ	240	290	340	385	435	485	535
Կերակրի աղ, գ	57	65	73	81	89	97	105
Կալցիում, գ	57	65	73	81	89	97	105
Ֆոսֆոր, գ	39	45	51	57	63	69	75
Կարոտին, մգ	345	410	475	520	565	610	655

է ճշտությամբ պահպանել կթու կովերի կերակրման և խնամքի ընդունված կանոնները: Ծնելուց հետո առաջին օրը կովին տալիս են լավ որակի խոտ և գոլ աղաջուր, իսկ 2-րդ օրվանից, նաև լափ՝ պատրաստված 1-1.5 կգ ցորենի թեփից, ալյուրից, 4-րդ օրվանից կերաբաժնում աստիճանաբար ավելացնում են մյուս կերերը՝ հյութալի, խտացրած կերերը և 7-8-րդ օրերին հասցնում նորմայով սահմանված չափի: Այդ ընթացքում ուշադիր հետևում են կրծի վիճակին, եթե այն կոշտացած է, կթում են հաճախակի և կատարում կրծի մերսումներ: Առանձնակի ուշադրություն պետք է դարձնել կովերի կերակրմանը լակտացիայի առաջին ամիսներին, երբ կենդանին, հորմոնալ գործոնների ազդեցությամբ, ֆիզիոլոգիապես հնարավորություն ունի տալ առավելագույն քանակով կաթ: Այդ ժամանակաշրջանը տևում է շուրջ 100-120 օր և կոչվում է լիակթման շրջան: Այդ շրջանում նորմայով առաջարկված սննդարար նյութերը չեն կարող ապահովել էներգիայի այն քանակությունը, որն անհրաժեշտ է այնքան կաթ սինթեզելու, որքան կովը ընդունակ է: Կենդանին ստիպված օգտագործում է իր օրգանիզմում կուտակված սննդանյութերի մի մասը, որի հետևանքով նիհարում է: Որպեսզի հնարավոր լինի մեղմացնել սննդանյութերի այդ պակասը, անհրաժեշտ է ծնից 10-12 օրից հետո նորմայով նախատեսված սննդանյութերի քանակին ավելացնել շուրջ 2-3 կերի միավորին համարժեք կերեր՝ որպես ավանս: Միաժամանակ հետևում են թե կովը որքանով է ավելացնում կիթը, երբ կաթն ավելանում է, կերը /ավանսը/ նորից են ավելացնում՝ շուրջ 1-1.5 կերի միավորի չափով և այդպես շարունակ, քանի դեռ կովը կիթն ավելացնում է, իսկ երբ կերն ավելացնելով կիթն այլևս չի ավելանում, հարկավոր է կերն աստիճանաբար պակասեցնել և հասցնել նորմայով նախատեսված մակարդակին:

Լակտացիայի երկրորդ շրջանում կովը պետք է ստանա նորմայով /աղյուսակ 2/ սահմանված սննդանյութերը, որպեսզի հնարավոր լինի վերականգնել դրանց պաշարը, որը ծախսվել է լակտացիայի առաջին ամիսներին՝ կաթի ինտենսիվ սինթեզի նպատակով: Բացի դրանից, լակտացիայի երկրորդ շրջանում կովի օրգանիզմում արդեն սկսում է զարգանալ պտուղը, որի համար սննդարար նյութեր են պետք: Կովերին լակտացիայի առաջին ամիսներին /3-4 ամիս/ ցանկալի է կերակրել և կթել օրական 3 անգամ, հետագա ամիսներին՝ 2 անգամ՝ առավոտյան և երեկոյան: Կովերին տրվող կերերը պետք է նախօրոք նախապատրաստել. խոտով կարելի է կերակրել՝ առանց այն նախապատրաստելու, ծղոտն անհրաժեշտ է մանրացնել, թրջել 2%-անոց աղաջրով, արմատապտուղները՝ լվանալ, մանրացնել և խառնել կտրտված ծղոտին: Հատիկային կերերը կենդանիներին պետք է տալ խոշոր աղացված ձևով, խառնել մյուս խտացրած կերերին: Կերերի կերակրման հերթականությունը տավարի համար քիչ նշանակություն ունի, քանի որ դրանք խառնվում են իրար, սակայն աշխատանքի կազմակերպման տեսանկյունից նպատակահարմար է տալ նախ խտացրած, ապա՝ հյութալի և վերջում՝ կոպիտ կերեր: Մսուրային շրջանում կովերին ջրով ապահովման ամենալավ միջոցն ինքնախմոցներն են: Այդ դեպքում նրանք օրական 8-10 անգամ ջուր են խմում, բայց եթե ինքնախմոցներ չկան, կովերին պետք է ջրել օրական 3 անգամ՝ կթելուց անմիջապես հետո: Կովերին պետք է պահել լուսավոր, չոր գոմերում, օդի ջերմաստիճանը այնտեղ պետք է լինի 8-10°C, իսկ ծնարանում՝ 14-16° C, օդի հարաբերական խոնավությունը՝ 70-75%: Ձմռան ամիսներին կովերի ամեն օր պետք է հանել զբոսանքի՝ առնվազն 3 ժամ տևողությամբ:

Խ. Սիմոնյան
Գյուղատնտեսական գիտությունների դոկտոր

Ա. Սիմոնյան
Գյուղատնտեսական գիտությունների թեկնածու

Ագորակոտ
Հոկտեմբեր 7 - 15, 2014 թ.
Թիվ 26 (2048)

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

ԲԵՐՔԻ ՏՈՆ ԼՈՌԻՈՒՄ

Վերջերս Գյուլագարակ համայնքի «Հեքիաթ» հանգստի գոտում, Լոռու մարզպետարանի նախաձեռնությամբ, անցկացվեց ավանդական դարձած Լոռու մարզային «Բերքի տոն» հանդիսությունը: Հանդիսավոր միջոցառմանը մասնակցում էին Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանը, Գյուղատնտեսության փոխնախարար Սամվել Գալստյանը, Գուգարաց թեմի առաջնորդ տեր Սեպուհ արքեպիսկոպոս Չուլջյանը, Վրաստանի Աջարիայի Ինքնավար Հանրապետության կառավարության ղեկավար Արչիլ Խաբաձեի գլխավորած պատվիրակությունը, համայնքների ղեկավարներ, հյուրեր:

Տոնակատարության մասնակիցներին մարզի տարածաշրջանների ավանդույթները բնութագրող ուրախ երգ ու պարով, թատերականացված տեսարաններով դիմավորեցին Թումանյանական հեքիաթների հերոսները: Ավանդույթի համաձայն, մարզի համայնքները ներկայացել էին առատ բերք ու բարիքով, յուրօրինակ ուտեստներով: Տաղավարների յուրօրինակ ձևավորումներով համայնքները չէին զիջում մեկը մյուսին: Ներկաների տրամադրությունն առավել քան տոնական էր:

Տոնակատարության մասնակիցներին ողջունեց, հյուրերին բարի գալուստ մաղթեց Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանը՝ կարևորելով նմանատիպ միջոցառումների անցկացումը, մարզի համայնքներին համախմբելու, գյուղացու քրտնաջան աշխատանքի արդյունքը ներկայացնելու ձգտումը: Գյուղատնտեսության փոխնախարար Սամվել Գալստյանը, շնորհավորելով լոռեցիներին տոնի կապակցությամբ, իր ելույթում նշեց, որ Լոռու մարզում տարին բերքառատ է եղել, կարևորեց կառավարության մեծ աջակցությունը՝ գյուղական համայնքների բնակիչներին: Լոռու մարզպետը պարգևներ, պատվոգրեր և շնորհավորագրեր հանձնեց մի շարք անվանակարգերում լավագույնը ճանաչված գյուղատնտեսներին և համայնքներին: ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից ևս պարգևատրվեցին մի խումբ գյուղատնտեսներ:

«Բերքի տոն-2014»-ին ակտիվորեն մասնակցելու, գյուղատնտեսական մթերքների ցուցանմուշները գեղեցիկ ձևավորելու և ցուցադելու համար լավագույն համայնքներ ճանաչվեցին Գարգառը և Ղուրսալին: Տաղավարի գեղեցիկ ձևավորման համար պատվոգրի արժանացավ նաև Վանաձորի մանկատան, Խնամքի կենտրոնի և Հատուկ դպրոցի սաների կողմից ձևավորված տաղավարը: Պարգևատրվեցին նաև տոնակատարության ընթացքում անցկացված բազկամարտի, կշռաքարի բարձրացման և պարանի ձգման մրցումներում հաղթող ճանաչված մարզիկները:

Տոնակատարությունը հագեցած էր նաև գեղարվեստական կատարումներով: Միջոցառմանն ուրախ տրամադրություն էին հաղորդել մարզի գրեթե բոլոր տարածաշրջաններից ժամանած անհատ կատարողները, պարային խմբերը:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ Մրցակցային դրամաշնորհային ծրագրերի մրցույթ

ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից իրականացվում է «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագիրը, որի բաղադրիչներից է «Մրցակցային դրամաշնորհների ծրագիր»: Մրցակցային դրամաշնորհային ծրագրերը իրականացվում են Հայաստանի Հանրապետության 10 մարզերում: Ծրագրերի ընտրությունը կատարվում է մրցութային կարգով՝ համաձայն գործող ընթացակարգի:

Նպատակը. Մրցակցային դրամաշնորհային ծրագրի հիմնական նպատակն է՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտում աջակցել նոր արտադրատեսակների, տեխնոլոգիաների, մեխանիզմների ստեղծմանը և տարածմանը:

Ընդունելի տեխնոլոգիաներ. Ներկայացվող ծրագրային առաջարկները պետք է համապատասխանեն հետևյալ չափորոշիչներին՝

- Գյուղատնտեսական ոլորտում արտադրվող արտադրանքի (գյուղմթերքի) որակի և որակական հատկությունների բարձրացում:
- Գյուղատնտեսական բիզնեսի շուկայավարման կատարելագործում՝ ներառյալ գյուղատնտեսական ապրանքների (մթերքների) արտադրություն, վերամշակում, պահեստավորում, նոր տեխնոլոգիաների ներդրում:
- Գյուղական բիզնեսի կառավարման բարելավում, կատարելագործում և բիզնեսի լավագույն փորձի զարգացում և տարածում:
- Գյուղատնտեսության ոլորտում կոոպերացիայի զարգացում, շուկայական կապերի ընդլայնում և ամրապնդում, ինչպես նաև գյուղ. մթերքների իրացման խնդիրների լուծում:
- ՀՀ տարածաշրջաններում կամ մարզերում գյուղատնտեսական արտադրանքի (մթերքի) նոր տեսակների և նոր տեխնոլոգիաների ներդրում, տարածում և զարգացում:

Իրավասու հավակնորդներ. Մրցակցային դրամաշնորհային ծրագրի մրցույթին կարող են մասնակցել՝

- Գյուղական ոլորտում գործող անհատ ձեռնարկատերեր, կոոպերատիվներ, ձեռնարկություններ (ՍՊԸ և այլն), միավորումներ (ասոցիացիաներ),
- Համայնքներում հիմնված ֆերմերային ֆորմալ և ոչ ֆորմալ (չգրանցված) գյուղական բիզնեսի խմբեր:

Ֆերմերային խմբերը պետք է բաղկացած լինեն առնվազն 5 հոգուց և ունենան տարբեր սեփական հողակտորներ (ֆերմերային խմբի անդամները չպետք է լինեն միևնույն ընտանիքից, բայց կարող են լինել բարեկամներ): Խմբի անդամները պետք է լինեն նույն մարզից:

Համագործակցություն. Դրամաշնորհ ստանալու համար դիմորդները պարտավոր են համագործակցել որակավորված ծառայություն մատուցողների հետ: Ծառայություն մատուցողներից պահանջվում է ապահովել տեխնիկական աջակցություն առաջարկի նախապատրաստման և իրականացման գործընթացին:

Ծառայություն մատուցողներ կարող են լինել՝

- մասնավոր խորհրդատվական համակարգի մասնագետներ,
- անկախ մասնագետներ և տեխնիկական փորձագետներ,
- հասարակական, հետազոտական, կրթական և խորհրդատվական հաստատությունների մասնագետներ,
- երկրում գործող միջազգային այլ ծրագրերի փորձագետներ և մասնագետներ:

Մասնակցության պայմանները. Հավակնորդը (դիմորդը), ծառայություն մատուցողի և այլ մասնակիցների հետ միասին, պետք է ներդնեն ծրագրով պահանջվող դրամաշնորհի ընդհանուր արժեքի նվազագույնը՝ 30 %-ը, կանխիկ գումարային տեսքով:

Որպես այլ մասնակցի պարտականություն, տարբեր գործընկերների մասնակցությունը և ներդրումը պետք է հաստատվի գրավոր համաձայնագրով, կնքված հիմնական հավակնորդի, ծառայություն մատուցողի և այլ մասնակցի միջև:

Բացի ֆինանսական ներդրումից, հավակնորդները կարող են կատարել ներդրումներ նաև բնամթերային տեսքով (շենք, շինություն, հող, աշխատուժ, հումք, գյուղ. մեքենաներ, սարքավորումներ, անասուններ, ծառայություններ և այլն), որոնք ուղղակիորեն կապված են դրամաշնորհային ծրագրի իրականացման հետ:

Ներկայացվող պահանջները. Հավակնորդի (դիմողի) կողմից ներկայացված հայտը պետք է բավարարի հետևյալ պահանջներին՝

- առաջարկվող ծրագրի տևողությունը չպետք է գերազանցի 12 ամիսը,
- դրամաշնորհի գումարը պետք է լինի՝ նվազագույնը 8.000 ԱՄՆ դոլար, իսկ առավելագույնը՝ 20,000 ԱՄՆ դոլար,
- հայտով պահանջվող դրամաշնորհը պետք է ուղեկցվի նշված դրամաշնորհի գումարի առնվազն 30%-ի չափով՝ կանխիկ համաֆինանսավորմամբ,
- ընդհանուր ծրագրի արժեքը չպետք է գերազանցի 60,000 ԱՄՆ դոլարը,
- դիմորդը չի կարող ստանալ մեկ անգամից ավել դրամաշնորհ,
- դրամաշնորհ չի հատկացվի այն հավակնորդներին, ովքեր անհաջողության են մատնել կամ նախկինում ձախողել են որևիցե դրամաշնորհային ծրագիր:

Հայտերի (դիմումների) ընդունումը. Շահագրգիռ հավակնորդները (դիմորդները) իրենց կողմից պատրաստված հայտերը և պահանջվող փաստաթղթերը պետք է ներկայացնեն ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի Մրցակցային դրամաշնորհային ծրագրերի քարտուղարություն մինչև **2014 թ. նոյեմբերի 24, ժամը 16:00:**

Վերջնաժամկետից հետո ներկայացված դիմումները չեն ընդունվի:

Հայտերը պետք է ներկայացվեն փակ ծրարներով, չորս օրինակից՝ մեկը բնագիր, երեքը՝ կրկնօրինակներ:

Ծանուցում՝ ինչպես ընտրված, այնպես էլ մերժված հայտատուները կտեղեկացվի գրավոր: Մերժված հայտատուներին կվերադարձվեն իրենց կողմից ներկայացված փաստաթղթերի բնօրինակը:

Դրամաշնորհների հատկացման և հայտերի պատրաստման կանոնակարգերին մանրամասն ծանոթանալու նպատակով, ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի Մրցակցային դրամաշնորհային ծրագրերի քարտուղարության աշխատակազմը, գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների հետ համատեղ, յուրաքանչյուր մարզում կկազմակերպի հանդիպումներ հայտատուների (դիմորդների) հետ, ըստ ներքոնշյալ ժամանակացույցի:

- **ՀՀ Շիրակի մարզում**, 2014 թ. հոկտեմբերի 20-ին, ժամը 11:00:

  ք.Ախուրյան, Ախուրյանի գյուղապետարանի շենք, Գյումրու խճուղի ՎՆ 42 շենք, 3-րդ հարկ:
- **ՀՀ Լոռու մարզում**, 2014 թ. հոկտեմբերի 20-ին, ժամը 15:00:

  ք. Սպիտակ, քաղաքապետարանի շենք, Շահումյան փող. 7 շենք:
- **ՀՀ Տավուշի մարզում,** 2014 թ. հոկտեմբերի 21-ին, ժամը 11:30:

  ք. Իջևան, մարզպետարանի շենք, Սահմանադրության փող. 1 շենք:
- **ՀՀ Գեղարքունիքի մարզում,** 2014 թ. հոկտեմբերի 21-ին, ժամը 15:00:

  ք. Գավառ, Սայադյան փող., 13 շենք:
- **ՀՀ Սյունիքի մարզում**, 2014 թ. հոկտեմբերի 22-ին, ժամը 13:00:

  ք. Գորիս, ՀՀ Սյունիքի մարզպետարանի Գորիսի ներկայացուցչություն (նախկին գործկոմի), Մաշտոցի 3 շենք:
- **ՀՀ Վայոց ձորի մարզում**, 2014 թ. հոկտեմբերի 22-ին, ժամը 16:30:

  ք. Եղեգնաձոր, մարզպետարանի շենք, Շահումյան 5:
- **ՀՀ Արարատի մարզում**, 2014 թ. հոկտեմբերի 23-ին, ժամը 11:00:

  ք. Արարատ, քաղաքապետարանի շենք, Շահումյան փող., 34 շենք:
- **ՀՀ Կոտայքի մարզում**, 2014 թ. հոկտեմբերի 23-ին, ժամը 15:00:

  ք. Աբովյան, Նոր-Գյուղ, 1-ին փողոց, 4-րդ հասցե (Աբովյան քաղաքի անասնաբուժարանի շենք):
- **ՀՀ Արագածոտնի մարզում,** 2014 թ. հոկտեմբերի 24-ին, ժամը 11:00:

  ք. Աշտարակ, մարզպետարանի շենք, Վարդգես Պետրոսյանի փողոց, 4 շենք:
- **ՀՀ Արմավիրի մարզում**, 2014 թ. հոկտեմբերի 24-ին, ժամը 14:00:

  ք. Արմավիր, մարզպետարանի շենք, Աբովյան 71:

Փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ տեղեկություններ.

Հայտերի պաշտոնական ձևակարգերը և հայտերի լրացման հետ կապված այլ անհրաժեշտ տեղեկություններ կարող եք ստանալ անվճար՝ գյուղատնտեսական աջակցության մարզային կենտրոններից:

- ՀՀ ԳՆ «ԳԾԻԳ» ՊՀ-ից, էլ. փոստ - info@arspiu.com, կայք - www.arspiu.com

Հեռ - 29-73-01; 29-73-02; 29-73-03

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է....

ՍՆԿԵՐ

Սնկերը ստորակարգ կորիզավոր (էուկարիոտ) օրգանիզմների առանձին թագավորություն են: Հայտնի է սնկերի ավելի քան 100 հազ. տեսակ՝ տարածված առավելապես Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում, ՀՀ-ում՝ մոտ 4200 տեսակ:

Ըստ վեգետատիվ մարմնի կառուցվածքի՝ տարբերում են ստորակարգ (մերկ պլազմային զանգվածի՝ ռիզոմիցելիումի ոչ բջջային կառուցվածք ունեցող սնկամարմնի ձևով) և բարձրակարգ (բջջային միցելիում) սնկեր:

Տարբերում են վայրի սնկերի 3 խումբ՝ խողովակավոր (սպիտակ սունկ, կեչասունկ, կաղամախասունկ, յուղասունկ, մամռասունկ), թիթեղավոր (շեկլիկ, աղվեսասունկ, խոնավասունկ, կոճղասունկ, շամպինյոն, ալիքասունկ, կաթնասունկ, ցլասունկ), պարկավոր (մորխ, ոլորքագլուխ, գետնասունկ): Կենսագործունեության ընթացքում սնկամարմինն ընդունակ է ձևափոխվելով առաջացնել տարբեր գործառույթներ (փոխադրող, անբարենպաստ պայմաններում գոյատևմանը նպաստող) կատարող գոյացություններ (քլամիդոսպորներ, միցելիումային ձգաններ, ռիզոմորֆներ, սկլերոցիումներ):

Սնկերն օդակյաց են, աճման լավագույն ջերմաստիճանը 20–25^{0}C է: Սնկերը տարածված են հողում, ջրավազաններում, բուսական ու կենդանական ծագում ունեցող մնացորդների, սննդամթերքի, արդյունաբերական հումքի և արտադրանքի վրա: Ըստ բնական միջավայրի ու բնակեցման հիմնանյութի՝ տարբերում են սնկերի հետևյալ էկոլոգիական խմբերը՝ հողային (մասնակցում են օրգանական մնացորդների քայքայման, հումուսի առաջացման շարժընթացներին), ջրային, օդային, ֆիտոպաթոգեն, գիշատիչ, արդյունաբերական ապրանքները փչացնող, կենդանիների և մարդու զանազան հիվանդություններ (գոնջ, խուզող որքին, տարբեր սնկախտեր) հարուցողներ և այլն:

Կենցաղում սնկերի թունավորությունը որոշելու գրեթե բոլոր նշաններն ու եղանակները (կտրելիս՝ սպիտակ կամ կաթնանման հյութի առկայությունը, երկնագույն գունավորումը, կծու կամ տհաճ համը, սնկի եփուկում արծաթի գդալի կամ գլուխ սոխի, սխտորի սևանալը) հուսալի չեն: Միակ հուսալի միջոցը ուտելի և թունավոր սնկերի հատկությունները ճիշտ իմանալն է: Սնկերով թունավորման ախտանշաններ (որովայնի շրջանում հանկարծակի ցավեր, սրտխառնոց, փսխում, ուժեղ լուծ, ընդհանուր թուլություն, մարմնի ջերմաստիճանի նվազում) ի հայտ գալիս, տուժածին պետք է շատ հեղուկներ խմեցնել, տալ լուծողական և անմիջապես դիմել բժշկական օգնության:

Սունկը՝ որպես սննդամթերք

Խմորասնկերը, օրինակ, դեռևս վաղ անցյալում օգտագործվել են գինեգործության և հացաթխման մեջ: Պանրի տարբեր տեսակների ստացման համար կիրառվել են վրձնասնկերի առանձին տեսակներ: Վերջին ժամանակներս այդ սնկերի օգտագործման ոլորտներն անհամեմատ ընդլայնվել են. էական հաջողությունների է հասել սնկերից հակաբիոտիկների, վիտամինների, ֆերմենտների, տարբեր օրգանական թթուների և այլ նյութերի ստացումը:

Սնկերի մեծ մասն ուտելի է, կան նաև ոչ ուտելի սնկեր: Դրանցից են՝ կեղծ անձրևասունկը և լեղասունկը, որոնք թունավոր չեն, սակայն ունեն տհաճ համ ու հոտ, որոնք պահպանվում են նույնիսկ երկարատև մշակումից հետո: Բարձրակարգ սնկերը սննդում լայնորեն օգտագործվող բնական բարձրորակ սննդամթերք են: Բազմաթիվ վայրի և մշակովի սնկերի պտղամարմինն օգտագործվում է սննդի մեջ:

Սնկերի սննդարար արժեքը պայմանավորված է նրանց ինքնատիպ քիմիական բաղադրությամբ. պարունակում են բուսական և կենդանական մթերքներին բնորոշ հատկություններով նյութեր: Սնկերի պտղամարմիններում շատ են սպիտակուցները (հատկապես՝ գետնասնկում և սպիտակ սնկում, ավելի քիչ՝ կեչասնկում ու կաղամախասնկում), ճարպերը և ածխաջրերը, նաև՝ կենսաբանորեն կարևոր այլ նյութեր (ազատ ամինաթթուներ, ֆունգին և այլն), որոնք ստամոքսահյութի արտադրման ակտիվ խթանիչներ են:

Սննդային արժեքայնությամբ տարբերում են սնկերի 4 խումբ. 1-ին խմբում ամենաարժեքավոր տեսակներն են՝ սպիտակ սունկը, կաթնասունկը, կոճղասունկը, շեկլիկը, 2-րդում՝ միջին որակի սնկերը՝ կեչասունկը, կաղամախասունկը, յուղասունկը, աղվեսասունկը, շամպինյոնը, ալիքասունկը, 3-րդում՝ մամռասունկը, սև կաթնասունկը, ցլասունկը, խոնավասունկը, 4-րդում՝ քիչ արժեքավոր սնկերը՝ ճռճռուկը, գոմաղբասունկը, կծվասունկը և այլն: Սննդարարության հետ միասին, ուտելի սնկերն արագ են աճում, հաճախ՝ մեծ քանակությամբ, դրանցից պատրաստված պահածոները երկար են պահպանվում: Սակայն հարկավոր է զգույշ լինել, քանի որ սնկերում պարունակվող մեծ քանակությամբ թաղանթանյութը ոչ միայն դժվար է յուրացվում, այլև նվազեցնում է մյուս սննդանյութերի յուրացումը:

ՀՀ-ում տարածված ուտելի սնկերից սննդում քիչ տեսակներ են օգտագործում, ինչը բացատրվում է հիմնականում ժողովրդական սովորություններով: Ընդ որում՝ յուրաքանչյուր բնակավայրում հավաքում են սնկի խիստ որոշակի տեսակներ: Կա նաև տներում աճեցվող թեյի սունկ (ճապոնական, հնդկական և այլն), որից ստացված թթվահամ ու թույլ գազով ըմպելիքը հագեցնում է ծարավը և բարելավում մարսողությունը:

ՕԳՏԱԿԱՐ ՀՈՆԸ

Հոնը հայտնի է հնագույն ժամանակներից: Հոնազգիների ընտանիքն ընդգրկում է ավելի քան 30 տեսակ: Ունեն տերևաթափ ծառի կամ թփի տեսք, կան բազմամյա խոտաբույսեր, մշտադալար տեսակներ: Հին Հռոմում բույսը շատ հարգի է եղել՝ պտուղները մշակել և դրել են աղի մեջ, ինչպես ձիթապտուղը:

Ըստ ավանդազրույցի՝ այս ծառից են պատրաստել Սուրբ Խաչը: Հոնը եղել է Երուսաղեմում աճող ամենամեծ ծառատեսակը: Սակայն այն փոքրացել և վերափոխվել է. ճյուղերը կախվել են ներքև, ծաղկի թերթիկները դարձել չորս հատ և «խաչվել», առէջքները՝ կարմրել, փշերը՝ ստացել են գամերի տեսք, իսկ պտուղների հյութը՝ արյան գույն: Փայտանյութը շատ ամուր է և ճկուն, չմաշվող, դիմացկուն է հարվածային բեռնվածքների հանդեպ: Հնում պատրաստել են նիզակներ և նետեր, անվիկներ, կոճակ և այլն:

Բույսը կիրառում են կաշվեգործության մեջ՝ նուրբ, մոխրականաչավուն ներկանյութ ստանալու համար: Հոնը հնագույն ժամանակներից աճում է նաև մեր հայրենիքում: ՀՀ բնական պայմաններում տարածված է հյուսիսարևելյան շրջանների, Սյունիքի խառն անտառներում, ծովի մակերևույթից մինչև 1100-1400 մ բարձրության վրա: Ստվերասեր, ցրտադիմացկուն, երաշտադիմացկուն բույս է, ոչ պահանջկոտ հողատեսակի հանդեպ:

Ոսկեդեղին ծաղիկները հավաքված են վահանաձև ծաղկափթթությունների մեջ, ծաղկում է փետրվարի վերջին և մարտին: Ծաղկման շրջանը 10-14 օր է: Մեղրատու բույս է, ծաղկափոշին՝ վաղ գարնանային մեղվահացի հումքի մատակարար: Պտղաբերում է 12-րդ տարում (մինչև 30 կգ), հասուն ծառը տալիս է մոտ 100 կգ բերք, ապրում է 120 տարի, հաճախ՝ մինչև 250: Հայերենում անվանվում է նաև զողալենի՝ հավանաբար այն տեսակներն են, որոնք ունեն թթանման խոտաբույսի տեսք: Հնագույն ժամանակներից հայտնի են եղել բույսի բուժիչ հատկությունները: Օգտագործվում է միայն ժողովրդական բժշկության մեջ: Բուժահումք են հանդիսանում՝ արմատը, կեղևը, տերևը, պտուղը, նույնիսկ՝ կորիզը:

Պտուղը հարուստ է Բ-ակտիվություն ունեցող նյութերով (ռուտին) և ասկորբինաթթվով, ինչի շնորհիվ ունի ճնշումն իջեցնող հատկություն:

Հոնի պտուղը լավացնում է ախորժակը, սթափեցնում գինովցած մարդուն, որպես կանխարգելիչ միջոց՝ խորհուրդ է տրվում, եթե առկա է սնդիկից կամ կապարից թունավորվելու վտանգ: Պտղի մեջ պարունակվող պեկտինը և բջջանյութը նպաստում են թույների հեռացմանն օրգանիզմից:

Հյութն օգտակար է շաքարային դիաբետի, մրսածության, գիրության դեպքում, կանխարգելում է ածխաջրերի փոխակերպումը ճարպի:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Ագրոլրատու» թերթ
1 տարվա գինը՝ 3960 դրամ
6 ամսվանը՝ 1980 դրամ
1 համարինը՝ 120 դրամ

«Ագրոլրատու»թերթի և «ԱԳՐՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ամսագրի

«Ագրոգիտություն» ամսագիր
1 տարվա գինը՝ 8100 դրամ
6 ամսվանը՝ 4050 դրամ
1 համարինը՝ 1350 դրամ

Բաժանորդագրությունն իրականացնում են՝
Գյուղատնտեսության աջակցության հանրապետական և մարզային կենտրոնները, «Հայփոստ», «Հայմամուլ», «Պրես-Ափտաշե» կազմակերպությունները:

ՍԿՍՎԵԼ Է 2015 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ագրոլրատու
AGRONEWS
Հասցեն՝ Երևան, Մամիկոնյանց 39ա, հեռ.՝ 23-21-02, ֆաքս՝ 23-03-80
E-mail: asrc@cln.am կայք http://www.asrc.am

ՀԻՄՆԱԴԻՐ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
«Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն» ՓԲԸ
Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Գլխավոր խմբագիր և համարի պատասխանատու՝ Լ. ՇԱԽՆԱԶԱՐՅԱՆ

Տպաքանակ՝ 1100
2 տպագրական մամուլ
գրանցման թիվ՝ 01 Մ 000226
դասիչ՝ 69105
պատվեր թիվ՝ 117
ստորագրված է տպագրության 14.10.2014 թ.
տպագրվում է ԳԱՀԿ տպարանում,
Երևան, Մամիկոնյանց 39ա